

Նուէրներու, Պատարագի եւ
ողորմութիւն ընելու մասին
Աղքատներուն ընդունելութիւն ը-
նելլ շատ օգտակար է ու անոնց
աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երա-
նելի է ան, որ կը խորհի աղքատին եւ
չքաւորին մասին, Տէրը չար օրերէն կը
փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի
վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի
մատներ»: (Սաղմոս 41:1-3): Կարիքա-
ւորները կերակրելու երջանկութիւնը
այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար
կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ
պիտի շահիս, երբ ունեւորները խնձոյ-
քի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ
անոր օգուտը: Անօթիներուն համար
եղած ընդունելութիւնը օգտակար է,
իսկ կուշտերուն համար եղածը՝ ոչ
Քրիստոս չըսաւ. «Յազեցածները կը-
տացուցիք» ու նաեւ չըսաւ. «Խմելիք
տուիք անոնց, որոնք գինով էին», այլ
ըսաւ. «Ճեսաք անոնք, որ ծարաւ էին
եւ դուք անոնց ջուր տուիք խմելու-
տեսաք մերկերը ու զանոնք հազցու-
ցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման
գործերն են, որ արժանի պիտի ըլլան
վարձատրութեան եւ երանութեան եւ
ոչ թէ կուշտերուն եւ ունեւորներուն
համար եղած կերուխումները, որով-
հետեւ ան որ աղքատը, կարօտեալը,
օտարը, հիւանդը եւ անտունը կը կե-
րակրէ, ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիս-
տոսն է, որ կ'ընդունի, Քրիստոսն է,
որ կը սփոփէ, Քրիստոսն է, որ կը
միխթարէ, Քրիստոսն է, որ կը հանգ-
չեցնէ եւ Քրիստոսն է, որ կը ծառայէ,
քանզի անսուս է Տէրունի խօսքը:

Յ. Մանդակունի

ՀԱՍՑԵ.

ՓՅՈՒՆԵԼ ԳՔՐԻՍՏՈՆ

զայն երկրագելու նպատակով
«Մենք... եկանք երկրագելու
իրեն» (Մտք. 2.2): Մոգերը նորածին
Փրկիչը տեսնելու հետաքրութենէ
մղուած չէ, որ կը փնտուին զինք:
Անոնց նպատակը իրեն երկրագելն
էր: Տարբեր նպատակով պէտք չէ
փնտուենք Քրիստոսը: Այսօր որքա՞ն
մարդիկ կան, որոնք եկեղեցի կ'եր-
թան ոչ թէ հանդիպելու Քրիստոսի եւ
երկրագելու իրեն, այլ՝ հանդիպելու
իրենց բարեկամներուն: Եկեղեցի
կ'երթան ո՞չ թէ լսելու Քրիստոսի
ձայնը, այլ լսելու բարոգիչին կամ
իրարու ձայնը: Ինչպէս մոգերը երբ
տուն մտան իրենց ուշադրութիւնը
կեղրոնացուցին Յիսուսի վրայ եւ ո՞չ
թէ ուրիշ բանի մը վրայ, այնպէս ալ
մենք, երբ եկեղեցի երթանք՝ պէտք է
մեր հայեացքը կեղրոնացնենք
Յիսուսի վրայ:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը
ամէն Կիրակի կը բաժնուի մեր
ժողովուրդին, Եկեղեցիներու
բանկալին մօտ: Նաեւ՝
Facebook-ի վրայ փնտուել «Jerak
կամ ՃՐԱԳ», ապա սեղմել
«Like»ը, կարդալու կամ ան-
դամագրուելու համար:



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՏԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Տիմ. 2.11-15:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆ ՄԱՏՁԵՌՈՒՄԻ 1.18-25

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի ծնունդը: Իր մայր՝
Մարիամ, նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախքան
ամուսնութիւնը Մարիամ յի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ՝ անոր նշանածը, արդար մարդ մը ըլլալուն համար
չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զայն, այլ խորհեցաւ
լոելեայն եւ ընել իրենց նշանախօսութիւնը: Սինչ այս մասին կը
մտածէր, ահա Տիրոջ Հրեշտակը երազի մը մէջ երեւաւ իրեն եւ ըսաւ.
«Յովսէփ, Դաւիթի որդի, մի՛ վախնար ամուսնանալու նշանածիդ՝
Մարիամի հետ, որովհետեւ իր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է: Որդի
մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ անիկա իր
ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»:

Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ, որ Տէրը
ըսաւ Եսայի մարգարէին միջոցաւ. «Ահա կոյսը պիտի յղանայ եւ
որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչես Էմմանուէլ», որ կը նշանակէ
Աստուած մեզի հետ:

Երբ Յովսէփ արթնցաւ կատարեց ինչ, որ Տիրոջ հրեշտակը
հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ, բայց
չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ եւ
զայն Յիսուս կոչեց:

**ՃԼՈՐՀԱՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՐ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՐ
ԶԵԶԻ ՄԵԶԻ ՄԵԾ ԱՒԵՏԻՄ**

ԿԻՐԱԿԱԾՈՐԵՎՅՅ ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՅԾ

ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՏԻՏՈՍԻՆ 2.11-15

Որովհետեւ Աստուած իր շնորհ-քը յայտնեց, որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս որ փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնիք:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուդ: Քաջալերէ՝ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս որ ուրէ մէկը քեզ չարիամարիէ:

ԱՌԱՎԱՀ.

Կ'աղաշեմ ձեզի ո՞վ մարդիկ, խօսքս ձեզի է, որ կ'ուղիեմ. ո՞վ պարզամիտներ խորագիտ եղէք, ո՞վ անմիտներ խրասս պահեցէք ձեր սրտերուն մէջ. լսեցէք զիս, որովհետեւ աղուոր բաներ պիտի ըսեմ ձեզի, շրթներս ուղիղ թելադրութիւններ պիտի ընեն ձեզի. ես միշտ ճշմարտութիւնն է, որ կը խօսիմ: Ինձի համար պիդ են ստախոս լեզուները:

ԻՆՉՈ՞Ւ ՄՈՍ ԿԸ ՎԱՌԵՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Մոմի գործածութիւնը առհասարակ՝ հարուստ եւ խորութեան իմաստ ունի: Ծիսական կեանքին մէջ ան կը խորհրդանշէ Քրիստոսու՝ աշխարհի լոյսը, որ կը հալածէ մեղքի խաւարը: Անձնական գործածութեան պարագային միշտ աղօթքը կ'ընկերանայ անոր: Պլացող մոմը աղօթքով, մեզի միշտ կը յիշեցնէ որ «Լոյսի եւ ցերեկի որդիներ ենք», ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ (Ա. Թեղ. 5:5), պատրաստ ստեղծագործելու բարի գործեր, նման մեր արարիչ Աստուծոյ, եւ ըլլալու լոյս, հոն ուր խաւար է: Ննջեցեալի հոգւոյն, հիւանդի առողջութեան, գործի յաջողութեան համար վառուող մոմը աղօթքով, երախտագիտութեան համեստ արարք մըն է առ Աստուած, խնդրելով իր կամքին կատարումը ի լուսաւորութիւն ապրող ու զինուրագրեալ եկեղեցւոյ անդամներու սրտերու ու մտքերու, եւ ի հանգիստ՝ ննջող ու յաղթական եկեղեցւոյ անդամներու հոգիներուն:

ԱՂՕԹՔ Ե.Ասորի

Փրկէ՛ զիս, Տէ՛ր, սատանային զադունածիզ նետերէն, որ բազում մեքենայութիւններով պատելով կը պաշարէ զիս: Յափշտակելով միտքս, կը գերեզարէ մեղքերու ցանկութեամբ թշնամիներուս կողմէ զիս ծաղը ու ծանակի ենթարկելով:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Յիսուսի Ծննդեան եւ
Սկրտութեան տօնի խորհուրդը

Տօները կը բաժնուին երկու մասի՝ Առաքելաղիր եւ Հայրապետագիր: Առաքելաղիր տօներէն են Ծննդեան, աստուածայայտնութեան, Մկրտութեան, Համբարձման, Հոգեգալստեան եւ Քրիստոսին վերաբերող միւս տօները, որոնք սահմաներ են առաքեալները: Միւս տօները սահմաներ են եկեղեցւոյ հայրապետները: Հայ եկեղեցին ունի հինգ մեծ տօներ (Տաղաւարներ, Աստուածամօր վերափոխումը, Խաչվերացը: Եւ այսպէս, առաջին տաղաւարը Յիսուսի Ծննդեան տօնն է: Աստուած մարդացաւ, մարդոց մեղքերը վերցուց, չարչարւեցաւ եւ մահուան դատապարտւեցաւ մեզի համար, որ յաւիտենական կեանքի արժանացնէ: Հայերը այդ տօնը՝ Ծնունդը, աստուածայայտնութեան եւ մկրտութեան հետ միասին կը կատարեն Յունուար վեցին: Մկրտութիւնը յիշատակն է Յորդանան գետին մէջ Անոր մկրտուելուն՝ Յովհաննէս Մկրտիչ ձեռքով: Աստուածայայտնութեան կը կոչուի, որովհետեւ Աստուծոյ փառքը յայտնուեցաւ մեզի:

Հարց. Ինչպէ՞ս կը կատարուի Ծնունդն ու Մկրտութիւնը եկեղեցին ներս:

Պատասխան. Յունուար 5-ին երեկոյեան կը կատարուի ճրագալոյց Աստուածայայտնութեան՝ կը վառեն բոլոր կանթեղները եւ մոմերը: Կը մատուցուի Սուրբ Պատարագ: Կը կարդացուի Աստուածաշունչի առաջին Գիրքի՝ Ծննդոցի Ա.Գ. գլուխները, ուր կը յիշատակուին արարչութիւնը, մարդուստեղծումը, անկումը:

Այս ամէնուն նպատակն է ցոյց տալ, որ Յիսուսի ծնունդով կատարւեցան բոլոր մարդարէութիւնները: Անոր յայտնութեամբ մարդը Աստուծոյ միանալու, Աստուծոյ թագաւորութիւնը մըտնելու ճանապարհ գտաւ: Աստուածաշունչի առաջին մարդարէութիւնը (Ծննդոց Գ. 15) կատարուեցաւ: Ան «պիտի ջախջախէ անոր գլուխը»: Պատարագէն ետք կը կատարուի հսկումի արարողութիւնը: Առաւօտեան, 6 Յունուարին, կը մատուցուի Ս. Պատարագ, որմէ ետք՝ Ջրօրհնէք, Յիսուսի մկրտութիւնը (Ժողովուրդը կ'ըսէ՝ խաչը ջուրը կը դնեն): Յիսուս սրբեց ջուրը (Ջուրը օրհնուեցաւ). պատարագիչը Սուրբ Միւռոն կը կամթեցնէ ջուրին մէջ, կ'օրհնէ: Սովորութեան համաձայն, Ժողովուրդը այդ ջուրէն շիշերով տուն կը տանի, որպէս բուժի զեղ հիւանդներու համար: Յետոյ քահանան Ժողովուրդին համարի տուն կը տանի, որպէս բուժի զեղ հիւանդներու համար: Յետոյ քահանան Ժողովուրդին համարի տուն կը տանի, որպէս բուժի զեղ հիւանդներու համար: Կանուխ կ'երթայի տուները՝ աւետելու Յիսուսի ծնունդը: Այստեղին է, որ յառաջ եկաւ տնօրհնէքի սովորութիւնը: Աւետիս տանելու սովորութիւնը մինչեւ վերջերս պահպանուած էր արեւմտահայերուն մօտ: 6 Յունուարի առաւօտուն կանուխ կ'երթայի տուները եւ կ'երգէին Ծննդեան շարականներ:

ՈՍԿԵՂԻՆ ՀԱՄԱՐ

Թող ձեր խղճնտանքը մաքուր ըլլայ, որպէսզի անօրով մնան անոնք, որ ձեր մասին կը չարախուեն, ձեր քրիստոնեական բարի կենցաղը բամբասելով: (Ա. Պետրոսի 3.16)